

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Ռադիկ Օհանջանյանի

Ես՝ Ռադիկ Օհանջանյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2019թ. նոյեմբերի 18-ին կնքված N 115 պայմանագրի համաձայն:

2019թ. նոյեմբերի 18-ից մինչև 2020թ. մայիսի 18-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.


1. Իրականացրել եմ ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության 2019 և 2020թթ. ծրագրերով նշանակված ստուգումների կատարման աշխատանքները:

Մասնավորապես.

- ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. նոյեմբերի 21-ի թիվ 31-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2019թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2019թ. նոյեմբերի 27-ին և ամփոփվել են 2020թ. հունվարի 15-ին:
- ՀՀ ֆինանսների նախարարի 2020թ. մարտի 11-ի թիվ 5-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2020թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2020թ. մարտի 16-ին: Ներկայումս ստուգումը կասեցված է:

2. Մասնակցել եմ վերոգրյալ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:
3. Մասնակցել եմ իմ կողմից կատարված ստուգման արդյունքների վերաբերյալ բացատրության ներկայացման աշխատանքներին:
4. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ



Ռադիկ Օհանջանյան